ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12-ը մարտի 2018թ.

Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ աշխատակազմի զինանշանագրային բաժնի պետ Գ. Մելքոնյան,

ՀՀ ՊՆ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕՇ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Մեդալների և կրծքանշանների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ
2	«Կանտասով» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի և «Կանտասով» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, իսկ «Կանտասով» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ, ուստի և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չունի:

2.3 Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտով ներկայացված գինը կազմում է 741 525 ՀՀ դրամ, ուստի հայտի ապահովման չափը պետք է կազմեր 37 076.25 ՀՀ դրամ, այնինչ ընկերության կողմից ներկայացվել է 0.25 ՀՀ դրամով պակաս՝ 37 076 ՀՀ դրամ: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև ապահովման խնդիրը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Մելիքյանը, Գ. Մելքոնյանը, Գ. Ոիստյանը և Հ. Բարսեղյանը կողմ քվեարկեցին չմերժել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը, իսկ Կ. Բրուտյանը դեմ քվեարկեց և որոշեց մերժել մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 1:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Գրիգորյան)

3.1 Գնային առաջարկ ներկայացրել 1 մասնակից.

ՀՀ	Գնումների անվանումը	ՁՄՄ	Քանակը	Նախահաշիվ 2 փուլի գումարը	Լիազոր գործակալի որոշմամբ ընտրված մասնակցի			Մրցույթին մասնակցող ընտրված մասնակցի		
					անվանումը	գինը		անվանումը	գինը	
						առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ-ն		առանց ԱՄՀ	ներառյալ ԱՄՀ-ն
1	Մեդալներ, կրծքանշաններ /ՀՀ ՊՆ ռազմական համալսարանների ավարտական կրծքանշան/	հատ	150	525 000	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	393 125	471 750	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	393 125	471 750
2	Մեդալներ, կրծքանշաններ / ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի հրամանատար աշտաբային դասընթացների ավարտական կրծքանշան/	հատ	35	210 000	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	174 854	209 825	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	174 854	209 825
3	Մեդալներ, կրծքանշաններ / Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտի կրծքանշան/	հատ	10	60 000	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	49 958	59 950	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ	49 958	59 950

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 27.03.2018թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) վարվել են բանակցություններ: Բանակցությունների ավարտին Երևանի ոսկերչական

գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ -ն 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 465 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է 208 250 ՀՀ դրամ իսկ 3-րդ չափաբաժնի համար առաջարկել է 59 500 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 30.03.2018թ. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Գ. Մելքոնյան

Գնահատող Հ. Բարսեղյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

30.03.2018թ.